— Օրհնութեան յանուն ուսուցիչ պ. Մկրտչի Պալեան, որ ունի տօնել ի մեծ աւուրս գյիսնամեակ ուսուցչութեան իւրոյ. թ. 498։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Լուդվիկայ Սարգսեան Յարութիւնեանց Բագուեցւոյ, յաղագս նուիրաբերութեան նորա 5000 բուբլեաց վասն շինութեան Ճանապարհի վանուցն Սանահնի. թ. 503։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն բագուաբնակ պ. Ղազարոս Յովհաննիսեան Մայիլեանց, յաղագս յանձնառութեան նորա ի կառուցանել զեկեղեցին Շամախի քաղաքի Ծախիւք իւրովք. թ. 505։

ԲԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

1903 թ. յունուարի 8. Սինոդը հրամայեց՝ Կարս քաղաքի եկեղ. նոր շինութեան վերաբերեալ ամբողջ գործը և Տփխիսի դատաստանական պալատի կոչնագիրը ուղարկելով Տփխիսի թեմական ատեանին, պատուիրել նորան յանձնել Սինոդի հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանցին։

— Յունուարի 10. Սինոդը հրամայեց՝ անվաւեր համարել Ապրակունեցի Ղազարեանի և Մինասեանի պայմանագրերը, որոնց տրուած էր կապալով Երնջակի վանքի ամայի գետինը, ջրաղացը և վանքի անտառը նոյն վանքի նախորդ վանահայրերից, և նոր ամուրգ նշանակել Հին Նախիջևանի Հոգ. կառավարութեան ատեանում՝ պայմանների և սակարկութեան թղթերը առաջարկելով Սինոդի հաւանութեան և հաստատութեան։

— Յունուարի 10. Շամախաբնակ Թառայեանց եղբայրների տան յատակագիծը, կալուածագիրը և քաղաքական

ճարտարապետի արձանագրությունը շինության ամրության համար՝ ուղարկել Կովկասի քաղաքական մասի Տ. կառավարչապետին, ստանալու Բարձր. թույլտվությունն, որ տունը 7000 բուբլիով գնուի առաջնորդարանի և թեմական ատեանի համար։

— Յունուարի 10. Սինոդը հրամայեց՝ պատուիրել Տփխիսի թեմական ատեանին, կատարել անյապաղ Սինոդի 1902 թ. նոյեմբերի 20-ի թ. 1641 արձակած հրամանը, տալու Դաւիթ քահ. Դիրդիրեանցին 300 բուբլի վիճակային արդիւնքից, լրացնելով այդ գումարը Նորաշէն եկեղեցու քահանաների գանձանակադրամից, նախապէս արդելք դնելով գանձանակատի վերայ։

— Յունուարի 17. Թոյլ տալ Ղարաբաղի թեմական ատեանին ընդունել Շուշւոյ գաւառի Խնապատ գիւղի բնակիչ Վիգէն Տ. Մկրտչեան Բաղալեանին հոգևոր կոչման մէջ և ձեռնադրել նոյն գիւղի ժողովրդի համար քահանայ։ Ընծայացուն սովորել է Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, ապահոված և ընտրուած է նոյն գիւղի ժողովրդից, որ բաղկացած է 88 տնից և չունի քահանայ։

— Յունուարի 17. Վերադարձնել Աղէքսանդրապոլի գաւառի Ղափուլի գիւղի եկեղեցու տանիքի նորոգութեան յատակագիծը Երևանի թեմական ատեանին, պատուիրելով նորան՝ կարգադրել աւարտելու եկեղեցու տանիքի վերանորոգութիւնը քաղաքական ճարտարապետի հսկողութեամբ, յայտնելով նաև այս մասին Երևանի նահանգապետին ի գիտութիւն։

— Յունուարի 22. Թոյլ տալ Երևանի թեմական ատեանին ընդունել Հին Նախիջևանի գաւառի Զնարերդ գիւղի բնակիչ Սարգիս Տ. Յովակիմեանցին հոգևոր կոչման մէջ, կարգելով նորան միայն սպասաւոր նոյն գիւղի եկեղեցու, որը բաղկացած է 165 տնից և ունի երկու քահ.։ Սոցանից մինը ծերութեան պատճառաւ հրաժարուած է. ընծայացուն ապահոված է և ընտրուած նոյն գիւղից, սովորել է Հին Նախիջևանի քաղաքական դպրոցում։

— Յունուարի 24. Պատուիրել Երևանի թեմական ատեանին կարգադրել ընդունելու օրինական կարգով կարսաբնակ պայմանագանց կապալառու Մանուկ Բաղդասարեանից Հոռոմոսի վանքի Տայլար կոչուած վարելահողերը՝ Տփխիսի դատաստանական պալատի վճռի համաձայն, և նշանակել նոր ամուրդ Կարսի հոգ. կառավարութեան ատեանում, յանդիմանելով միանգամայն կառավարութեան բոլոր անդամներին իրենց անհոգութեան և գործը կնճռոտելուն համար:

—Յունուարի 27. Պատուիրել նոյն թեմ. ատեանին, Վեհափառ Հայրապետի կոնդակի համաձայն՝ ներել Աղէքսանդրապոլի գաւառի Հոռոմ գիւղի ծխական կարգընկէց Սրապիոն քահանային, դարձնելով նորան վերստին քահանայական կարգը, որից զրկուած էր ապօրինի կնապահութեան համար, յայտնելով այս մասին նաև Երևանի նահանգապետին:

— Յունուարի 29. Յարգել Տփխիսի թեմական ատեանի միջնորդութիւնը և ուղարկել Տփխիսի նահանգապետին Ախալցխայի գաւառի Ծուղրութ գիւղի բնակիչ Տիգրան Տ. Վարդանեանցի հարկից ազատման թերթը՝ իմանալու թէ չկա՞յ օրինական արգելք ընծայացուի ձեռնադրութեան համար Դերբենդ քաղաքի ժողովրդին հովուելու: Ընծայացուն աւարտել է Ախալցխայի հոգևոր միջնակարգ դպրոցի և Անդրկովկասեան պետական ուսուցչական սեմինարիայի դասընթացները և վարել է ուսուցչութեան և աւագ ուսուցչութեան պաշտօններ Շամախու Հայոց եկեղ. ծխ. դպրոցներում:

— Յունուարի 29. Թոյլ տալ Տփխիսի թեմական ատեանին ընդունել Բօրչալու գաւառի Քօլագեօրան գիւղի բնակիչ Եղեկիա Տ. Յարութիւնեանցին հոգևոր կոչման մէջ՝ ձեռնադրելով քահ. նոյն գիւղի համար: Ընծայացուն քննուած է թեմական ատեանում, ապահոված և ընտրուած է նոյն գիւղից, որ բաղկացած է 22 տնից և չունի քահանայ:

— Յունուարի 31. Տալ Տփխիսի դատաստանական պալատի վճռի պատճէն Մ. Ամոռի փաստաբանին, պատուիրելով նորան բանալ դատ Ղալ—արդալար գիւղի բնակիչների դէմ

Գեղարդայ վանքի Գասպարքենդ կոչուած հողերը ապօրինի գրաւելուն համար։

— Փետր. 3. Երջաբերական հրամաններով պատուիրել Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, նախապէս ժողովելով իրենց դիւաններից կարևոր տեղեկութիւններ և փաստաթղթեր, դատ վարել Կովկասի Ուսումնական վարչութեան դէմ, յետ պահանջելու եկեղեցիների և վանքերի կալուածները և իրեղէնները, որ գրաւել է յիշեալ վարչութիւնը, և ուղարկել Սինոդ յիշեալ կալուածների և իրեղէնների ցուցակները՝ տեղեկութիւն տալով հանդերձ, թէ նրանցից որոնց համար է գործ բացուած դատարաններում և որոնք են վճռուած եկեղեցիների և վանքերի օգտին, և թէ վճռուածները յանձնուել են արդեօք մեր հողևոր վարչութիւններին։

— Փետր. 3. Ընդունել ճեմարանապարտ Սպիրիդոն Մելիքեանցին հողևոր կոչման մէջ Մ. Աթոռի միաբանների շարքում և տալ տեղեկութիւն Վանական կառավարութեան և Երևանի արքունական պալատին։

— Փետր. 3. Յարգելով Տփխիսի թեմ. ատ.ի միջնորդութիւնը՝ ուղարկել տփխիսաբնակ Աւետիք Պապեանցի հարկից ազատման թերթը Տփխիսի նահանգապետին, խմանալու նորա կարծիքը ընծայացուին հողևոր կոչման մէջ ընդունելու համար, և կարգել սպասաւոր Ծղնեթ գիւղի եկեղեցւոյ, մերժելով Պապեանցի խնդիրը՝ թոյլ տալու իրեն սպասաւորել Տփխիսի Մողնւոյ ս. Գէորգ եկեղեցում, իբրև ատորին պաշտօնեայ մինչև ձեռնադրութիւնը։ Ընծայացուն սովորել է Ներսիսեան դպրոցում, ապահոված և ընտրուած է նոյն գիւղից, որը բաղկացած է 65 տնից և ունի մի քահանայ։

— Փետր. 3. Թոյլ տալ Տփխիսի թեմ. ատեանին ընդունել տփխիսաբնակ Արշակ Երիցեանին հողևոր կոչման մէջ և կարգել սպասաւոր Ներքին գիւղի եկեղեցւոյ։

— Փետր. 3. Պատուիրել Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, ուղարկել Սինոդ սրբազնագործ պաշտօնեաների այրիների և որբերի հոգատարութեան դրամարկղների ելից և մուտից մանրամասն հաշիւները։

— Փետր. 7. Պատուիրել Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, ուղարկել Սինոդ եկեղեցիների, վանքերի, դպրոցների, աստուածահաճոյ հաստատութիւնների՝ եկեղեցիների և վանքերի գոյքերի, մանրամասն հաշիւները և ճիշդ տեղեկութիւններ նոցա մասին։

— Փետր. 10. Պատուիրել Տփխիսի աթոռապատական կալուածների կառավարչին, տալ պ. Սեդրակ Մանդինեանցին 1903 թ. կենսաթոշակը կալուածների արդիւնքից՝ 500 րուբլի, և ստացագիրը ուղարկել Սինոդ։ Պ. Մանդինեանը ստանում է նաև Ներսիսեան դպրանոցից 500 ր. տարեկան՝ ընդամէնը 1000 րուբլի։

— Փետր. 10. Կարևոր չհամարելով Աղէքսանդրապոլի գաւառի Հոռոմ գիւղի համար նոր քահանայ ունենալը, մերժեց Երևանի թեմ. ատեանի միջնորդութիւնը Սարգիս Վարդանեանցին ձեռնադրելու համար։

— Փետր. 10. Պատուիրել Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, թոյլ չտալ գաղթական քահանաներին ինքնագլուխ կատարելու ուրիշ քահանաների ծխերի հոգևոր պիտոյքները։

— Փետր. 19. Երևանի շրջ. դատ. վճռի համաձայն՝ պատուիրել Երևանի թեմական ատեանին պահանջել երևանցի հանգ. Մարգար Յովհաննիսեանի կտակակատար Գրիգոր Ամիրխանից հետևեալ գումարները. — Ս. Էջմիածնին՝ 300 րուբլի, Երևանի Կաթուղիկէ եկեղեցուն՝ 200 րուբլի, Սևանայ վանքին՝ 200 ր., Տփխիսի կուսանաց վանքին՝ 200 ր. և Երևանի թեմ. դպ.-ի համար տասը տարի շարունակ տարեկան 20 ր.։

— Փետր. 19. Յարիցին քաղաքի Հայոց եկեղեցու շինութեան մակարդակը ուղարկել Սարատովի նահանգապետին հաստատելու և վերադարձնելու Սինոդ, որպէս զի Ներքին գործոց Տ. Նախարարի ձեռքով բարձր. թոյլտուութիւն խնդրուի եկեղեցու կառուցման համար։

— Փետր. 21. Թոյլ տալ Երևանի թեմական ատեանին

ընդունելու հոգևոր կոչման մէջ Եարուբ Դարալագեազի գաւառի Փոռ գիւղի բնակիչ Յովակիմ Եահնուարեանցին և ձեռնադրելու նորան քահ. նոյն գիւղի համար, որից ընտրուած է և ապահոված. ընծայացուն քննուած է թեմ. ատեանում։

—Փետր. 21. Պատուիրել Տփխիսի թեմ. ատեանին ապաշխարութեան ենթարկել Դաւիթ քահ. Գիրգիրեանցին երկու եօթնեակ. իսկ 40 բուբլի պահանջը թողնել անհետևանք, մերժելով միանգամայն թեմ. ատեանի վճիռը՝ յիշեալ քահ.-ին Սևանայ վանքն ուղարկելու եռամսեայ ապաշխարութեան համար։

— Փետր. 28. Պատուիրել Ռուսաստանի Հայոց թեմական ատեաններին, նոցա ենթարկուած հոգևոր կառավարութիւններին, գործակալներին և Մ. Աթոռի վանական կառավարութեան, այսուհետև Մ. Աթոռի, վանքերի և եկեղեցիների կալուածները և կամ առևտրական շահագործութիւնները ու շինութիւնները ամրդախօսութեամբ վարձով տալու համար՝ նախապէս հրատարակել լրագիրներում և հրապարակական յայտնի տեղերում պատերին յայտարարութիւններ կպցնել։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՄԿՈՒԹԻՒՆԸ.

Ը.

ԱՒԵՏԱՐԱՆՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ։

Ասում են, թէ Յիսուս ոչ մի անգամ աշխատութեան, յառաջադէմ գործունէութեան յորդոր չի կար-